Հավելված 11
«ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «22» հունվար 2018թ

«Մեդիտեք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Անուշավան Խաչատրյանի (AN0600023 տրված 02.08.13թ-ին 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԶՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Մեդիտեք» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ֆ. Իսակովի 22/3
Բանկ՝ ԻՆԵՏԲԱՆԿ ՓԲԸ
Հ/հ 20500223263010001
ՀՎՀՀ 01222077
Տնօրեն
Անուշավան Խաչատրյան

Կ.Տ *

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[6] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ____ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Մեդիտեք ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Ինեկոբանկ ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝2050022326301001

6. Վճարողի ՀՎՀՀ՝01222077

7. Վճարողի ՀՇՀ՝

8. Շահառու՝ <<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 05539526

10. Շահառուի բանկը՝ <<Արարատ բանկ>>ՓԲԸ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/1510019952250100

12.Գումարը թվերով և բառերով՝216500 Երկու հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝Տուժանքի ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. Կոդ՝--- Էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /«4» 18.բ. Կ.Տ
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8

ք.Գյումրի «22» հունվար 2018թ.

<<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Մեդիտեք>>ՍՊԸ ,ի դեմս տնօրեն Ա.Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2.165.000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) ***լրացուցիչ համաձայնագրով կնքված վճարման ժամանակացույցի համաձայն*** նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[4]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ *աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից* միակողմանիորեն լուծվում է:[5]

---

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3 ՀՎՀՀ 05539526 Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ Հ/Հ 15100199052250100 Տնօրեն---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Մեդիտեք» ՍՊԸ ք. Երևան, Ծ.Իսակովի 22/3 ՀՎՀՀ 01222077 Բանկ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2050022326301001 Հեռ. 56-01-10 Տնօրեն՝ _____ Կ. Խաչատրյան Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ամրագրվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

Հավելված N 1
« 22 » 01 2018 թ. կնքված
N ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8 ծածկագրով
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
	Ապրանքի										
1	33691162	Լաբորատոր ազդանյութեր/ Հեմոգլոբին		Հեմոգլոբինի որոշման թեստ-հավաքածու 3x100մլ կամ համարժեքը):Մեթոդ: հեմցիանիդ կոլորիմետրիկ: Ֆորմատ: 3000 մլ կոնցետրատ:1թեսթը համարժեք է 2,5մլ Ստուգվող նմուշ: արյուն/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-8 0C, For In Vitro Diagnostic only	թեսթ	6	72,000	12000	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3	12000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
2	33691162	Լաբորատոր ազդանյութեր/ Գլիկոլիզացված հեմոգլոբին HBA1C		Գլիկոլիզացված հեմոգլոբինի որոշման թեստ-հավաքածու 35*2մլ կամ համարժեքը):Ալիքի երկարությունը - 415նմ: Մեթոդ: կոլորիմետրիկ: Ստուգվող նմուշ: արյուն/պլազմա: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն:Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-8 0C, For In Vitro Diagnostic only STAT FAX 4500 -ի համար	թեսթ	1800	90,000	50	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3	50	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
3	33211110	Մեդիասքրին MediScreen /Մեզի մեջ գլյուկոզի/որոշման թեսթ ստրիպների հավաքածու/ Ուրիստիկ գլյուկոզ/		Մեզի մեջ գլյուկոզայի որոշում-կամ համարժեք, Մեթոդ-ինդիկատորի գունավորում: Ֆորմատ-100թեսթ,կամ համարժեք Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայությունՖիրմային նշանի առկայությունը Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-30oC, For In Vitro Diagnostic only	թեսթ	30	150,000	5000	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3	5000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի

11	33211150	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու		Միզանյութի որոշման տեստ հավաքածու Մեթոդ` UV-կինետիկ; Ալիքի երկարությունը - 340 նմ: Ֆորմատ` 5 x60 մլ կամ համարժեք:1թեսթը համարժեք է 1մլ Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա/մեզ: Պահպանման պայմանները`Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավուրմը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններումպահվում են առնվազն8 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	32	211,200	6600	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3		6600	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
13	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Հեպ ատիտ C		Հեպատիտ C վիրուսի սպիտակուցների հակամարմինների որակական հայտնաբերման թեստ-հավաքածու HCV Ab (Cypress diagnostics կամ համարժեքը): Մեթոդ: Իմունոխրոմատոգրաֆիկ Ֆորմատ:2x25 թեստ ձողիկ Արդյունքների վերծարման ժամանակը`15-20 րոպե Ստուգվող Նմուշ: Արյան շիճուկ` պլազմա Յանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմային Նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-25bC Զգայունությունը` 99.0% Սպեցիֆիկությունը` նվազագույնը 99,5%	թեսթ	270	810,000	3000	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3		3000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
17	33211130	Խոլեստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ -հավաքածու		Ընդհանուր խոլեստերինի որոշման տեստ հավաքածու Մեթոդ`կոլորոմետրիկ; Ալիքի երկարությունը - 500նմ: Ֆորմատ` 2*100մլ կամ համարժեք: 1թեսթը համարժեք է 1մլ Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա: Պահպանման պայմանները` Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավուրմը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններում պահվում են առնվազն12 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	28	140,000	5000	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3		5000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
24	33211120	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու/ Գլյուկոզ		Գլյուկոզի որոշման տեստ-հավաքածու Մեթոդ`կոլորոմետրիկ; Ալիքի երկարությունը - 500նմ: Ֆորմատ` 4 x250մլ + ԹՍՈՒԿ: կամ համարժեք:1թեսթը համարժեք է 1մլ: Ստուգվողնմուշ` արյան շիճուկ/պլազմա: Պահպանման պայմանները` Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավուրմը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններում պահվում են առնվազն12 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	15	300,000	20000	ք.Գյումրի Գ. Նժդեհի 3/3		20000	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի

26	33211230	ՈՊՈ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու/		Սիֆիլիսի որոշման տեստ-հավաքածու RPR Carbon Մեթոդ: ֆլոկուլյացիա: Ֆորմատ: 100 թեստ կամ համարժեք Ստուգվող նմուշ: արյան շիճուկ Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն Ֆիրմային նշանի առկայությունը Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only A - ռեագենտ 2.2 մլ C- բացասական կոնտրոլ 1մլ C+ դրական կոնտրոլ 1մլ Խառնիչ ձողիկներ - 100 հատ Սրվակ ասեղով թեստի համար - 1հատ Պլաստիկ սլայդներ թեստի համար միանվագ օգտագործման 10 հատ 1թեսթը համարժեք է 0,022մլ	թեսթ	45	54,000	1200		1200	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
27	33211270	Տոտալ պրոտեին-կոլ Total protein-Col /Ընդհանուր սպիտակուցի որոշման թեսթ հավաքածու/		Ընդհանուր սպիտակուցի որոշման տեստ հավաքածուԸնդհանուր սպիտակուցի որոշման տեստ հավաքածու Մեթոդ՝ ֆոտոմետրիկ; Ալիքի երկարությունը - 546 նմ: Ֆորմատ՝ 6*120մլ:կամ համարժեք:1թեսթը համարժեք է 1մլ Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ/պլազմա: Պահպանման պայմանները՝Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավորումը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններումպահվում են առնվազն7 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	14	39,200	2800		2800	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
31	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Ամիլազա		Ալֆա-Ամիլազորոշման տեստ հավաքածու Մեթոդ՝ կինետիկ; Ալիքի երկարությունը - 405 նմ: Ֆորմատ՝ 2*50 մլ կամ համարժեք:1թեսթը համարժեք է 1մլ Ստու•վող նմուշ՝արյան շիճուկ/պլազմա /մեզ: Պահպանման պայմանները՝Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավորումը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններումպահվում են առնվազն8 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	200	120,000	600		600	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի

32	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Ֆոսֆոր		Ֆոսֆոր՝ որոշման տեստ հավաքածու Մեթոդ՝ կոլորիմետրիկ; Ալիքի երկարությունը - 340 նմ: Ֆորմատ՝ 5*60 մլ կամ համարժեք: Ստու•վող նմուշ՝արյան շիճուկ/պլազմա : Պահպանման պայմանները՝Ռեակտիվները 2-80C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը, իսկ փաթեթավորումը բացելուց հետո ռեակտիվները 2-100C պայմաններում պահվում են առնվազն 8 շաբաթ: ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	18	10,800	600		600	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
43	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/ՊՊԺ		Ակտիվ պարտիալ պրոտրոմբինային ժամանակի որոշման թեստ հավաքածու;Մեթոդ:ֆիբրինագոյացման ժամանակի որոշում:Ֆորմատ:5*4մլ: 1թեսթը համարժեք է 0,1մլ:Ստուգվող նմուշ-պլազմա:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	50	20,000	400		400	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
45	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Նատրիում		Նատրիում (Na) 50 տեստ, (2x50ml) , ներառյալ ստանդարտ R1 - 50 մլ ուրանիլ ացետատ և մագնեզիումի ացետատ R2 - 50 մլ ամոնիում տիոցիկոլատ R3 - 1 մլ կալիբրատոր կամ համարժեքը: Մեթոդ: կոլորիմետրիկ: Ստու•վող նմուշ: արյան շիճուկ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը: Սերտիֆիկատ: ISO 9001: Պահպանման պայմանները 2-80C, For In Vitro Diagnostic only	թեսթ	280	140,000	500		500	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի
51	33691162	Լաբորատոր ազդանյութեր/Մագնեզիումի որոշման թեսթ		Մագնեզիումի որոշման թեսթ-հավաքածու Մեթոդ՝ կոլորիմետրիկ; Ալիքի երկարությունը - 520 նմ: Ֆորմատ՝ 2x100 մլ կամ համարժեք:1թեսթը համարժեք է 1մլ Ստու•վող նմուշ՝արյան շիճուկ/պլազմա: Պահպանման պայմանները՝Ռեակտիվները 20-15C պայմաններում պահվում են մինչև փաթեթի վրա նշված ժամկետը ForInVitroDiagnosticonly Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Ֆիրմայի նշանի առկայությունը:Ծագման երկրի սերտիֆիկատի առկայություն: ISO 9001 և ISO 13485 սերտիֆիկատների առկայություն:	թեսթ	26	7,800	300		300	Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:Մատակարարումն ըստ պահանջի

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
Գնման գործընթացը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

***Ծանոթություն
ա. Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 3/3 հասցեով:
բ. Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:
գ. Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված
դ. Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ և հնարավորության դեպքում տրամադրել կոնտրոլ սիճուկ
ե.armeps համակարգում <<Հատ>> չափման միավորը հասկանալ <<թեսթ>>

ԳՆՈՐԴ

«Գյումրու բժշկական կենտրոն»
ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի
3/3
ՀՎՀՀ 05539526
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ,
Գյումրիի մ/ճ
Հ/Հ 1510019952250100

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիտեք» ՍՊԸ
ք. Երևան, Ծ.Իսակովի 22/3
ՀՎՀՀ 01222077
Բանկ՝ <<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050022326301001
Հեռ. 56-01-10
Տնօրեն՝
Ա. Ղազարյան
Կ.Տ

Հավելված N 3
« 22 » 01 2018 թ. կնքված
N ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետ /ըստ վճարման ժամանակացույցի
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 22 » 01 2018 թ. կնքված
N ԳԲԿ18-ԳՀԱՊԶԲ-15/15-8 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

22.01.2018թ N <<ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8>> պայմանագրի

ք.Գյումրի 31.01.2018թ

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն՝ Արմեն Իսահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Մեդիտեք » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝Ա. Խաչատրյանի (այսուհետև՝Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով **22.01.2018թ N <<ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8>>** պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 3.2 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.2 կետը կողմերը որոշեցին հաստատել պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է)՝ պայմանագրի գործողության ժամկետը նախատեսելով մինչև 2018թ-ի դեկտեմբերի 20-ը, և սահմանելով, որ սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ-ի փետրվարի 01-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

2.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը :
2.2 Սույն պայմանագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն պայմանագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Գնորդ»	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	"Մեդիտեք" ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3	ՀՀ ք. Երևան-0004,Ծ. Իսակովի 22/3
ՀՎՀՀ 05539526	Ինեկոբանկ ՓԲԸ
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ	Հ/Հ 2050022326301001
Հ/Հ 1510019952250100	ՀՎՀՀ 01222077
Տնօրեն----------	Տնօրեն՝----------Ա. Խաչատրյան
	Կ.Տ.

Հավելված N 2

« 22 » 01 2018 թ. կնքված

N ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8 ծածկագրով պայմանագրի

N ԳԲԿ18-ԳՀԱՊՁԲ-15/15-8 ծածկագրով պայմանագրի ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նպրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33691162	Լաբորատոր ազդանյութեր/ Հեմոգլոբին	0	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	6545.5	72,000
2	33691162	Լաբորատոր ազդանյութեր/ Գլիկոլիզացված հեմոգլոբին HBA1C	0	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	8181.8	90,000
3	33211110	Մեդիասքրին MediScreen /Մեզի մեջ գլյուկոզի/որոշման թեսթ ստրիպների հավաքածու/ Ուրիստիկ գլյուկոզ/	0	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	13636.4	150,000
11	33211150	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու	0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	19200.0	211,200
13	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Հեպատիտ C	0	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	73636.4	810,000
17	33211130	Խոլեստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ -հավաքածու	0	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	140,000
24	33211120	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու/ Գլյուկոզ	0	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	27272.7	300,000
26	33211230	ՈՊՈ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու/	0	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	4909.1	54,000

27	33211270	Տոտալ պրոտեին-կոլ Total protein-Col /Ընդհանուր սպիտակուցի որոշման թեսթ հավաքածու/	0	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	3563.6	39,200
31	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Ամիլազա	0	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	10909.1	120,000
32	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Ֆոսֆոր	0	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	981.8	10,800
43	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/ՊՊԺ	0	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	1818.2	20,000
45	33691162	Լաբորատոր ազդանյութեր /ռեագենտներ/Նատրիում	0	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	12727.3	140,000
51	33691162	Լաբորատոր ազդանյութեր/Մագնեզիումի որոշման թեսթ	0	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	709.1	7,800
															2,165,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ
Գնման գործընթացը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

ԳՆՈՐԴ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհի 3/3
ՀՎՀՀ 05539526
Բանկ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»ԲԲԸ, Գյումրիի մ/ճ
Հ/Հ 1510019952250100

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիտեք» ՍՊԸ
ք. Երևան, Ծ.Իսակովի 22/3
ՀՎՀՀ 01222077
Բանկ՝ <<Իսեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050022326301001
Հեռ. 56-01-10
Տնօրեն՝
Ա. Խաչատրյան
Կ.Տ